Grant Thornton

Արևային ՖՎ վահանակների և էլեկտրական մեքենաների մարտկոցների թափոնների կառավարումը Հայաստանում. մարտահրավերներ և զարգացման հնարավորություններ



Կլոր սեղան քննարկում

06 նոյեմբեր, 2026թ.

Ինչո՞ւ ենք այսօր այստեղ

Շուկայի զարգացումը պահանջում է նախապատրաստվել հաջորդ փուլին:

Հայաստանում արևային էներգետիկայի և էլեկտրական տրանսպորտի շուկաների զարգացումը նոր պահանջներ է առաջացնում շահագործման ժամկետն ավարտած սարքավորումների թափոնների կառավարման նկատմամբ:

01	Բացահայտել	շուկայի կարիքներն ու առաջնահերթությունները
02	Քննարկել	գործնական խոչընդոտներն ու հնարավոր լուծումները
03	Նախանշել	մասնավոր հատվածի ներգրավման հնարավորությունները

© 2026 Grant Thornton Consulting CJSC

1. **Շուկայի աճը և թափոնների ծավալների աննկալվող ավելացմանը նախապատրաստվելը**

Արևային ՖՎ վահանակների շահագործման ժամկետն ավարտած թափոնների գնահատված ծավալը

ԻՐԱՎԻՃԱԿ

Վերջին տարիներին Հայաստանում զարգացել են արևային Էներգետիկայի և Էլեկտրական տրանսպորտային միջոցների շուկաները: 2024 թվականին շահագործման ժամկետն ավարտած արևային ՖՎ վահանակների թափոնների գնահատված ծավալը կազմել է շուրջ 17 տոննա:

2024	2030	2040
~17	>400	~2,589
տոննա	տոննա	տոննա

Կանխատեսումները ցույց են տալիս ծավալների Էական աճ: Դրանք ապագա ծավալների հաստատված ցուցանիշներ չեն, սակայն ընդգծում են նախապես պատրաստվելու կարևորությունը:

© 2026 Grant Thornton Consulting CJSC

2. **Կարգավորող դաշտը և բիզնեսի պատասխանատվությունը**

Հստակ կանոններ և ֆինանսավորման մեխանիզմներ արդյունավետ համակարգի հիմքում:

ԻՐԱՎԻՃԱԿ

- Թափոնների կառավարման արդյունավետ համակարգի համար անհրաժեշտ են հստակ կանոններ, սահմանված պատասխանատվություններ և դրանց գործնական կիրառումն ապահովող մեխանիզմներ:
- Արտադրողի ընդլայնված պատասխանատվության (ԱԸՊ) համակարգը նախատեսվում է որպես շահագործման ժամկետն ավարտած սարքավորումների հավաքման և էկոլոգիապես անվտանգ կառավարման գործընթացների ֆինանսավորման մեխանիզմ:
- Բիզնեսի համար առանցքային են պատասխանատվության բաշխումը, ֆինանսավորման մեխանիզմները, պահանջների կատարման պայմանները և համակարգի գործնական կիրառումը:

© 2026 Grant Thornton Consulting CJSC

3. **Ենթակառուցվածքներ, տեխնիկական կարողություններ և գործառնական մարտահրավերներ**

ԻՐԱՎԻՃԱԿ

Կախված սարքավորումների տեխնոլոգիայից և վիճակից՝ կարող են անհրաժեշտ լինել հետևյալ գործընթացները.

Հավաքում	Փոխադրում	Անվտանգ պահեստավորում	Փորձարկում և գնահատում	Կրկնակի օգտագործում	Նախնական մշակում	Վերամշակում

Այս արժեշղթայի տարբեր փուլերում առաջանում են ծախսեր, որոնք, հատկապես թափոնների սահմանափակ ծավալների պայմաններում, **գրեթե երբեք հնարավոր չէ ամբողջությամբ ծածկել օգտահանված նյութերի իրացումից ստացվող եկամուտներով**: Հետևաբար կարևոր է ապահովել ամբողջ համակարգի ֆինանսավորման կայուն մեխանիզմներ:

Տեղական լուծումների իրագործելիությունը կախված է առկա ենթակառուցվածքներից, տեխնիկական փորձառությունից, թափոնների ծավալներից և օգտահանված նյութերի իրացման շուկաներին հասանելիությունից:

© 2026 Grant Thornton Consulting CJSC

4. Համակարգի ֆինանսավորումը և բիզնեսի զարգացման հնարավորությունները

Տնտեսական արդյունավետությունը պետք է դիտարկել ամբողջ արժեշղթայի մակարդակով։

ԻՐԱՎԻՃԱԿ

Շահագործումից դուրս եկած արևային վահանակներն ու էլեկտրական մեքենաների մարտկոցները բիզնեսի համար հնարավորություններ են ստեղծում թափոնների կառավարման արժեշղթայի տարբեր փուլերում:

Բիզնես հնարավորություններ

Հավաքում, փոխադրում, պահեստավորում, փորձարկում, օգտահանում, կրկնօգտագործում, ապամոնտաժում և վերամշակում:

Տնտեսական սահմանափակումներ

Գործունեության բոլոր տեսակները չէ, որ կարող են առանձին վերցրած շահավետ լինել, հատկապես թափոնների սահմանափակ ծավալների պայմաններում։

Ֆինանսավորման մեխանիզմ

ԱԸՊ վճարները ծածկում են ծախսերի այն մասը, որը չի փոխհատուցվում ծառայությունների կամ նյութերի վաճառքից:

Կարևոր է հասկանալ՝ ինչը զարգացնել Հայաստանում, ինչը ֆինանսավորել ԱԸՊ համակարգով, և որտեղ կիրառել տարածաշրջանային կամ միջազգային լուծումներ:

© 2026 Grant Thornton Consulting CJSC

5. **Համագործակցություն և հետագա քայլեր**

Ամբողջական համակարգի ձևավորումը պահանջում է տարբեր դերակատարների համակարգված մասնակցություն:

ԻՐԱՎԻՃԱԿ

Արդյունավետ համակարգի ձևավորումը պահանջում է պետական կառույցների, արտադրողների, ներմուծողների, ոլորտային ընկերությունների, թափոնների կառավարման բիզնեսների, ներդրողների և այլ շահագրգիռ կողմերի գործակցություն:

Պետական կառույցներ	Արտադրողներ և ներմուծողներ	Արևային Էներգետիկայի ընկերություններ
Էլեկտրական մեքենաների շուկայի մասնակիցներ	Թափոնների կառավարման և վերամշակման բիզնեսներ	Ներդրողներ և այլ շահագրգիռ կողմեր

Առանձին որևէ դերակատար չի կարող ինքնուրույն ձևավորել ամբողջական համակարգը:

© 2026 Grant Thornton Consulting CJSC

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Արդյո՞ք գերատեսչությունները դիտարկում են արտադրողի ընդլայնված պատասխանատվության **(ԱԸՊ)** համակարգը որպես արևային ՖՎ վահանակների և ԷՄ մարտկոցների թափոնների կառավարման առավել նպատակահարմար **կարգավորող և ֆինանսավորման մեխանիզմ**: Թե՞ առկա այլ մոտեցման տեսլական:

2. Թափոնների գործածության **արժեշղթայի ո՞ր օղակներն է նպատակահարմար զարգացնել Հայաստանում**, և ո՞ր փուլերի համար կարող են առավել արդյունավետ լինել տարածաշրջանային կամ միջազգային լուծումները:

3. Հաշվի առնելով թափոնների ծավալների ակնկալվող աճը՝ որո՞նք պետք է լինեն կառավարման համակարգի ձևավորման **առաջնահերթ քայլերը**, և ինչպե՞ս պետք է կազմակերպվի **դերակատարների համագործակցությունը** դրանց իրականացման համար:

© 2026 Grant Thornton Consulting CJSC

Grant Thornton

<#ShapePart=Disclaimer#>